

մանափակված տեղում, կամ մի որ և իցէ տանը և մինչև անգամ սենեակում: Գիֆտերիտի թոյնը բաւական երկարակենցաղ է: այնպէս որ երկար ժամանակ համաճարակումից յետ երբեմն երբեմն պատահում են հիւանդութեան մի մի դէպքեր:

Հիւանդութիւնը գտնվում է աշխարհիս բոլոր մասերում, բայց գլխաւորապէս կետրոնանում է բարեխառն գօտու երկիրներում: Մանուկները աւելի են հիւանդանում քան թէ չափահասները: Գիֆտերիտից առաջացած մահի դէպքերը զանազան են, նայելով համաճարակմունքի սաստկութեանը, երբեմն նա հասնում է 30%—70% և աւելի:

Գ. Տ. Գ.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Յունիսի Յին Վաթուղիկէ Էջմիածնի տօնը փառաւոր կերպով տօնվեցաւ: Նախատօնակ երեկոյին Վեհափառ Վաթողիկոսը հանդէսով եկեղեցի իջաւ: Առաւօտեան ժամասացութենից յետոյ, վեհարանի առաջ, Վեհափառ Հայրապետի ներկայութեամբ, մաղթանք կատարվեցաւ: Երբ մաղթանքը վերջացաւ, միաբանական ուխտը ներկայանալով Վեհափառ Վաթողիկոսին ի շնորհաւորումն մեծ տօնի, Հայրապետական քաղցր օրհնութիւնն այս խօսքերով ընդունեց Նորին Օծութեան բերանից. «Տէր Աստուած զՄայր Աթոռս մեր զտուրը Էջմիածին զմեծ Վաթուղիկէ Հայաստանեայց հաստատուն պահեսցէ: զմիաբանութիւնս մեր շնորհիւն իւրով զարգացուցէ և զազգս մեր ուր ուրեք և իցեն օրհնեսցէ և անդրդուելի պահեսցէ մինչև ի կատարած աշխարհիս ամեն:»

Նոյն երեկոյին վանքի մէջ հրավառութիւն կար և ձեմարանի աշակերտներն աղգային երգեր կերգէին:

Վեհափառ Վաթողիկոսը յունիսի Տին բարեհաճեց գնալ Բիւրականի ամարանոցն, առաւելապէս անձնական տկարութեան թեթեւութիւն գտնելու:

Նորապսակ սրբ. Եպիսկոպոսներն նախ քան իւրեանց վիճակներ գնալն իւրաքանչիւրն Էջմիածնի տաճարի Իջման սեղանում՝ Ս. պատարագ մատոյց և միաբանական ուխտն հիւրասիրեց ճաշկերոյթով և այնուհետև մեկնեցան Ս. Էջմիածնից: Ամենից առաջ գնաց Սեսարիայի ծերունի Եղիայ Եպիսկոպոսը: Յունիսի կին գնաց Արաբկերի առաջնորդ Եզնիկ Եպիսկոպոսը: Յունիսի Գին գնաց Սեբաստիայի առաջնորդ Պետրոս Եպիսկոպոսն և յունիսի 11ին գնացին Զմիւռնայի առաջնորդ Մելքիսեղեկ Եպիսկոպոսն և Ղարսի առաջնորդ Գրիգորիս Եպիսկոպոսը:

Վեհափառ Հայրապետի բարեհաճութեամբ, սրբ. Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեան թողեց ձեմարանի ուսուցչական պաշտօնը, հիւանդութեան պատճառով, և նշանակվեցաւ Ղարսի Ս. Խաչ վանքի վանահայր, ուր և գնաց մայիսի վերջում:

Զարեքայ վանքի վանահայր Աստուածատուր Ա. Յարութիւնեանը կգրէ «Արարատին».

«Հայաստանի Գարգման գաւառի մէջ, հին ժամանակ եղել են բազմաթիւ վանքեր ծաղկեալ դրութեամբ, այսօր արդէն նոցա աւերակ դարձած յիշատակներն կմնան մեզ համար և ճանապարհորդների սիրտը կշարժեն: Միայն Զարեքայ անապատը տոկալով շատ անգամ կրկնվող յափշտակասէր բարբարոս ժողովրդի ձեռի առջև, կշարունակէ իւր գոյութիւնը: Այս վանքի մասին գեղեցիկ աւանդական պատմութիւններ կան են Թիֆլիս քաղաքի Շամբոր թաղի ձերուհիները, թէ ինչպէս շատ տարիներ առաջ այն բուն ժողովուրդը հալածված ու յափշտակված օտարների բարբարոսութենից թողել են վանքը և իւրեանց գիւղերն անտէրունչ և գաղթել դէպի Թիֆլիս և ուրիշ կողմերն: Սակայն ցաւալի է որ մի կողմից Զարեքայ վանքի կալուածները վէճի տակ են, միւս կողմից մի քանի գանձակեցի բեգերի անզգոյշ վարվողութիւնը և շահասիրութիւնը կմնասեն վանքին:

Արժ. վանահայրը շնորհակալութիւն կ'այտնէ այն անձներին, որոնք թէ վանքին և թէ նորա վիճելի կալուածների դրութեան բարելոքմանը կնպաստեն և նոցա, որոնք վերջումս ընծայած են վանքին եկեղեցական զարդեր: Նուիրատուները սղբա են. Թիֆլիսի Վաթուկիկէ եկեղեցու արժ. Գեորգ աւագ քահանայ Թէմուրազեան մի զառ շուրջառ, Վանքի մայր եկեղեցու միաբան արժ. Գեորգ քահանայ Գալստեան մի ճաշու աւետարան թաւշեայ երեսով, Նորաշենի սուրբ Աստուածածնի եկեղեցու երեսփոխան Ստեփան Ստեփանեան մի փոքրաղիր պատկեր դաստառակի տիկին Սոփիա Թէրզիբաշեան մի ատենի ժամագիրք և մի զոյգ բազման, Եօվանէ Բէգլարեան մի ժամարարի կարմիր թաւշեայ սաղաւարտ, տիկին Բարբարէ Բէգլարեան մի բուրվառ, տիկին Նատալիա Մանթաշեան մի զոյգ քշոց, մի զոյգ մոմակալ և մի մասնատուփ, գանձակեցի տիկին Եղիսաբէթ Աթանասեան մի լաւ վաքագոյր սեղանի:

Վերջը արժ. վանահայրը կկնդրէ Թիֆլիսի Շամբոր թաղի ժողովրդին, որ նա ևս չմոռանայ օգնել իւր հայրենի Զարեքայ անապատին, որի շրջակայքում ամփոփված են նոցա նախնիները:

Վեհափառ Վաթուկիկոսի տարեգարձին կարգացված այս իմաստալի ճառը կհրատարակենք, ինչպէս որ խօստացած էինք: Համոզված ենք, որ ամենայն բարի Հայն մխիթարվելու է պշակերտների տածած երախտագիտութեան զգացմունքի վերայ, որոնք մի օր ի հարկէ բարի պտուղ պիտի տան:

Վեհափառ Սուրբ Հայրապետ.

Ընդ զարնան, որ նշանակ է նորոգութեան, գեղեցիկ և վայելուչ է մեզ ի սերկեան աւուրս տօնել զտօն Ս. Օծութեանդ, յորում հեղաւ զեղաւ շնորհ Ս. Հոգւոյն ի գաղաթ ընտրելոյդ Աստուծոյ. և զի արգասիք շնորհաց Սուրբ Հոգւոյն են ճշմարտութիւն և օգտակարութիւն առ հայրենիս, նոքին և փայլին ճշգրտապէս ի բանս և ի գործս մեծի Հայրապետիդ մերոյ. զի Դու զկեանս Քո նուիրեցիր ի մտաւոր և ի բարոյական վերակենդանութիւն աղ-

զիս, Դու զնստեալսն ի խաւարի վերակոչեցեր ի կեանս նորոգ, Դու նորոգողը փառաց մեծանուն նախնեաց մերոց Հայրապետաց սրբոց և նոցին շաղաց ճշմարիտ Հետեող, զպատուանդան մեծի Աթոռոյդ զարդարեալ փայլեցուցեր նորանոր գործովք շինութեան. տպարանաւն ասեմ և Արարատ ամսագրով, Հոյակապ Թանգարանաւ, նախնաւանդ ժառանգութեան Ս. եկեղեցւոյս Հայաստանեայց դպրոցաց անձնադիր և քաջարթուն մեծ պաշտպանութեամբ և նոցունց բարեկարգութեամբ առ Հասարակ և Ճեմարանաւ, եկեղեցական կարգաց վերանորոգութեամբն և ձայնագրութեամբ, զորս մէն մի Թուել ոչ կարեմբ, այլ լուել իսկ ոչ. զի եթէ մեք լուեսցուք, յիշատակքը և քարինքդ աղաղակեսցեն և կրկնեսցեն դարուց ի դարս:

Յայսպիսունմն բազմակարօտ ժամանակի բարենորոգութեանց Քոց պսոցիկ յառաջդիմութեամբ պսակունմն յայտնապէս վկայէ զանսպառ խաղացունմն ի Քեզ Աստուածային անդուլ շնորհաց Սուրբ Հոգւոյն. ընդ որ և խնդամբ յոյժ և երջանիկ զանձինս Համարիմք. զի տեսանեմք որում աչք բազմաց ցանկացան և կարօտացան տեսանել և ոչ տեսին:

Անհափառ Հայրապետ, այս շնորհ երկնային, այս պարգև ողորմութեան, որ Քե և առ մեզ առատացաւ յԱմենակալէն, ոգևորութեան ի մեզ բոց ի ներքս ընթացուցանէ և երախտագիտութեամբ Հարկեցուցանէ տարածել առաջի Աթոռոյդ զհաւաստիս սրտից մերոց. և զի մի՛ վայրապար ի բան և եթ եզերեալ գտցին իղձք մեր հեռի ի գործոց, յաւուրս Ս. Յարութեան աշակերտքս ճեմարանիդ յղացաք ի սիրտս մեր խորհուրդ թարի, հանգանակութեամբ մերով գնել տոմսակ մի ներքին փոխառութեան յանուն ճեմարանիս մերոյ:

Անհափառ Տէր, աղաչեմք որդիաբար, նայեաց արդ Հայրագորով քաղցրութեամբ ի համարձակութիւն մտադրութեանս մերոյ, և ընկալ ի հաճոյս զայս նոր բողբոջ անսահման երախտագիտութեան մերոյ, որով քաջ իսկ կարես իմաստասիրել Թէ ցորբան և ցորչափ սիրտք մեր կապեալ կան ընդ Գէորգեան ճեմարանի, որպէս մանկանն առ սոսնտու իւր:

Եւ մեք որ սնանիմք ընդ հովանեաւ խնամոց մեծի Հայրապետիդ եղբարք մաղթեսցուք նոր ի նորոյ, զի նախախնամողն տիեզերաց երկարեսցէ զԹեւ կենաց Քոց ի բարեբաստութիւն ճեմարանիս և ի պայծառութիւն եկեղեցւոյս մերոյ, որպէս հազարաւորք և բիւրաւորք ի հանապազօրեայ աղօթս իւրեանց խնդրեն և փափագին տեսանել:

Եւ Դու, Անհափառ Տէր մեր հոգևոր, առատացո ի մեզ զշնորհս Ս. Հոգւոյն Քոյով օրհնութեամբ, զի և մեք ըստ բաղձանաց սրտից մերոց պատրաստ գտցուք իսպասաւորութիւն տանն Աստուծոյ և ի վաստակ Հայաստան աշխարհի ի փառս անուան մեծի Խնամակալիդ մերոյ և ի մխիթարութիւն համօրէն հօտին Հայաստանեայց Քեզ հաւատացելոյ:

Ի յիմաց աշակերտաց Ղեորգեան Ճեմարանի Սպեկուսոս Կանայեան:

Անհափառ Վաթողիկոսին առանձին յայտարարութեամբ հաղորդված է, որ Օգէստայում բնակող Իզմայիլցի Գիրգոր (Գրիգոր) Սէրէբրեանն ի կեանքը

արժ. Գրիգոր քաջանայ Խորասանձեանի յորդորակբով, կտակել է յօգուտ ազգային հաստատութիւնների 24,100 մանէթ, կտակը հաստատված է մայիսի 5ին և գումարը զրկած է արքունի դրամանոցի Օղէսսայի բաժանման մէջ: Նոյն 24,100 մանէթից 8000 մ. կտակված է Էջմիածնի Գէորգեան ճեմարանին, 6100 մ. Օղէսսայի հայ երկսեռ դպրոցներին, 2000 մ. Քիչնէի հայ դպրոցներին, 2000 մ. Ակկերմանի հայ դպրոցներին, 2000 մ. Գրիգորիպօլի հայ դպրոցներին, 2000 մ. Տուլայի հայ դպրոցներին և 2000 մ. Սիլիստրայի հայ դպրոցներին: Դրամանոցի վկայագրեր նոյն ինքն կտակօղի և իւր կնոջ մահից յետոյ Էջմիածնի Սինօղի մէջ պիտի պահվին: Դրամագլուխը անշարժ պիտի մնայ դրամանոցում, և միայն տոկոսիք պիտի ստանան: Դրամանոցից տոկոսիքը պիտի ստանան Օղէսսայի գործակալ քաջանան և եկեղեցու երեսփոխանը և ուղարկեն նշանակված տեղերն: Անոջ կենդանութեամբ բոլոր տոկոսիքը պիտի ստանայ կտակօղի կինը, իսկ նշանակված տեղերը պիտի ստանան կնոջ մահից յետոյ: Վեհափառ Հայրապետը մխիթարելով այսպիսի հայրենասիրական ջերմեռանդ և պատուական զգացմունքով և օրհնելով բարեաւեր մեծ. պ. Գրիգոր Սերէբրեաննիկեանին, բարեհաճեց վարձատրել յորդորող արժ. Գրիգոր քաջանայ Խորասանձեանին կերպասեայ ծաղկեայ փիլոնով:

Կհաւատանք, որ մեր ազգի մէջ կգտնվին զանազան տեղերն ազգասէր և պատուական Գրիգոր Սերէբրեաննիկեանի օրինակին հետեւել յօժարողներն: ցանկալի կլինէր որ արժ. քաջանաներն աշխատելնին նոցա յորդորել և բարեգործութեան նախանձել, ճանապարհներ ցոյց տան, որով ամեն հայասէր անձի երախտագիտութիւն վաստակելով, բարի անուն ժառանգելու են թէ բարերար կտակօղներն և թէ յորդորող քաջանաներն, ինչպէս ահա այս ներկայ գէպքում:

ԽԱՌՆ ԼՈՒԻՐԵՐ:

Անգլիայում դպրոցների եւ կողլէժների մեծագոյն մասի ուսուցչապետները, նոյնպէս եւ մասնաւոր անձներ, հրատարակեցին հետեւեալ ընդհանուր ուղերձ յոճական լեզու պարտադիր անելու դէմ. «Մենք ներքոյ ստորագրողներս, հասկանալով որ նոր կարգադրութեան պատճառով, որի զօրութեամբ Կէմբրիջի համալսարան մտնել ցանկացող իւրաքանչիւր կանդիդատից կպահանջվի յունական լեզուի գիտութիւն, բազմաթիւ ընդունակ եւ ջանասէր ուսանողներ պիտի զրկվին համալսարանական փթեռնեան արտօնութիւններից, խոնարհաբար կխնդրենք համալսարանի վարչութիւնը ի միտ առնել եւ նոր միջոցներ գտնել, որով բարձրագոյն ուսումնական տնտեսամէք պտուղ անձներ կարողանային ազատվել յունական լեզուի քննութիւն տալու պարտքից »: (The Educ. Times, № 213):